

## ՏԵՂԵԿԱՆՔ


### ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2016 թվականի առաջին կիսամյակում հանրապետության բնակավայրերի ջրամատակարարման համակարգերում իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրված թերությունների վերաբերյալ

ՀՀ բնակչության շրջանում աղիքային վարակիչ հիվանդությունների, այդ թվում ջրային բնույթի բռնկումների կանխարգելման նպատակով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է շարունակական վերահսկողություն (մոնիտորինգ) բնակչությանը տրվող խմելու ջրի որակի նկատմամբ, որի արդյունքում 2016թ. առաջին կիսամյակում արձանագրվել են մի շարք թերություններ:

**Լոռու մարզի** թվով 53 համայնքների ջրամատակարարման համակարգերի մասնագիտացված սպասարկումը իրականացվում է «Լոռիջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի (5 ջրմուղ՝ «Նովոսելցովո» (մասնակի), «Մաքրման կայան», «Լեռնաջուր» և «Ծովասար»՝ 17 բնակավայր) և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի (13 ջրմուղ՝ «Նովոսելցովո» (մասնակի), «Գյուլիդար», «Գետավան» «Ջրաշեն-Սպիտակ», «Չախկալի», «Շիրականուտ-Սպիտակ», «Ղազանչի», «Գերմանական թաղամասի հորատանցք», «Աքսյուտկինյան», «Կաթնաղբյուր», «Հովդարա», «Լոռի Բերդ-Ալավերդի» և «Ագարակ-Օձուն» ջրմուղներ) կողմից: Լոռու մարզի 65 համայնքներում թվով 93 ջրամատակարարման համակարգեր սպասարկվում են համայնքապետարանների կողմից: Մարզում շահագործվում են 6 գերատեսչական ջրմուղներ՝ Փամբակ՝ զինվորական մաս 53620, Սիվաշավան՝ զ/մ 63853, Ախթալա՝ զ/մ 40359, Լերմոնտովո՝ զ/մ 72207, Վանաձոր՝ տարեցների տուն և Ստեփանավան՝ «Սոճիներ» հանգստյան տուն: Լոռու մարզի 8 գյուղական համայնքներում օգտվում են միայն «գյուղամիջյան», «տեղային» ոչ կենտրոնացված աղբյուրներից՝ Քարաբերդ՝ «Հարությունի աղբյուր», «Վազգենի աղբյուր», Ֆիոլետովո՝ թիվ 1 և թիվ 2 տեղային աղբյուրներ, Գոգավան՝ «Գյուղամիջյան» տեղային աղբյուր, Ծաղկաշատ՝ «Տիգրոյի թալա» տեղային աղբյուր, Չկալով՝ «Գյուղամիջյան» տեղային

աղբյուր, Ճոճկան՝ թիվ 1 և թիվ 2 տեղային աղբյուրներ, Բագում՝ թիվ 1, թիվ 2 և թիվ 3 տեղային աղբյուրներ, Այրում՝ «Մեսրոպի» աղբյուր:

2016թ. առաջին կիսամյակի ընթացքում մանրէաբանական ցուցանիշներով իրականացվել է խմելու ջրի 5198 նմուշի հետազոտություն, որոնցից 664-ում արձանագրվել է շեղում (12.77%, 2015թ. երկրորդ կիսամյակում՝ 17.25%), այդ թվում՝ «Լոռիջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման ջրմուղներից 1352 նմուշ, 33 շեղում (2.4%), «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման ջրմուղներից 1397 նմուշ, 61 շեղում (4.3%), համայնքապետարանների և անհատ բնակիչների կողմից սպասարկվող ջրմուղներից՝ 2192 նմուշ, 508 շեղում (23.1%), գերատեսչական օգտագործման ջրմուղներից՝ 49 նմուշ, 11 շեղում (22.4%), գյուղական և հանգստի գոտիների չկենտրոնացված աղբյուրներից՝ 208 նմուշ, 51 շեղում (24.5%): Ըստ մարզի տարածաշրջանների կիսամյակի ընթացքում մանրէաբանական ցուցանիշներով իրականացվել է՝ Գուգարքի տարածաշրջանից՝ 1707 նմուշ, 294 շեղում (17.2%), Թումանյանի տարածաշրջանից՝ 865 նմուշ, 37 շեղում՝ (4.2%), Սպիտակի տարածաշրջանից՝ 808 նմուշ, 257 շեղում՝ (31.8%), Ստեփանավանի տարածաշրջանից՝ 907 նմուշ, 16 շեղում՝ (1.7%), Տաշիրի տարածաշրջանից՝ 911 նմուշ, 60 շեղում՝ (6.5%):



Լոռու մարզում չկենտրոնացված՝ թվով 43 գյուղամիջյան և 12 հանգստի գոտիների ծորակներից մանրէաբանական ցուցանիշներով հետազոտվել է 231

նմուշ, որից 59 նմուշում արձանագրվել են շեղումներ (25%), քիմիական ցուցանիշներով 228 նմուշ, որից 7 շեղում (3%):

Խմելու ջրի մանրէաբանական ցուցանիշներով ավելի հաճախ շեղումներ արձանագրվել են՝ Վանաձոր (2.7%), Սպիտակ (23.3%), Եղեգնուտ (35%), Դեբեդ (61%), Մարգահովիտ (46.5%), Լերմոնտովո (57.4%), Ֆիոլենտովո (43.5%), Բազում (63%), Արջուտ (46.3%), Ազնվաձոր (70%), Սարամեջ (42%), Արևաշող (36.7%), Քարաձոր (31%), Նոր Խաչակապ (53.5%), Ղուրսալի (62.5%), Շիրակամուտ (38.5%), Բլագոդարնոյե (100%), Նորամուտ (100%), Կաթնառատ (52.6%), Մղարթ (62.5%), Կաթնաջուր (67.8%), Ծաղկաբեր (49.2%) համայնքներում:

2016թ. առաջին կիսամյակում խմելու ջրի մակարուծաբանական ցուցանիշներով հետազոտվել է 14 նմուշ, շեղումներ չեն արձանագրվել:

Կիսամյակի ընթացքում սանիտարա-քիմիական ցուցանիշներով հետազոտվել է խմելու ջրի 5216 նմուշ, որից 67 նմուշում արձանագրվել է շեղում, այդ թվում՝ Սպիտակ «Ջրաշեն-Սպիտակ» ջրմուղում (ամոնիումային ազոտ՝ 1 նմուշ), «Ղազանչի» ջրմուղում (ամոնիումային ազոտ-5 նմուշ), «Շիրակամուտ» ջրմուղում (ամոնիումային ազոտ-1 նմուշ), Գոգարանի «Քոլագիրան» ջրմուղում (ամոնիումային ազոտ-1 նմուշ, պերմանգանատային օքսիդացում-1 նմուշ): Ամոնիումային ազոտ ցուցանիշով շեղումներ են արձանագրվել նաև Հարթագյուղ («Չնգլտի աղբյուր» ջրմուղ՝ 1 նմուշ), Կաթնաջուր («տեղային» աղբյուր, 1 նմուշ), Սարամեջ («Պալովի աղբյուր» ջրմուղ, 2 նմուշ, «Գրգռան աղբյուր» 1 նմուշ), Նոր Խաչակապ («Ալաշաններ» ջրմուղ՝ 2 նմուշ, «Դոշի աղբյուր» 2 նմուշ), Լեռնանցք («Մելիքի աղբյուր» ջրմուղ՝ 1 նմուշ), Եղեգնուտ («Կառնուտ» ջրմուղ՝ 3 նմուշ), Արջուտ «Ոսկու հանք» ջրմուղ՝ 4 նմուշ), Այրում («Մեսրոպի աղբյուր» տեղային՝ 1 նմուշ), Ձ/Մ 53620 («Տեղային» գերատեսչական՝ 2 նմուշ), Դեբեդ («Գոքորի թալա» ջրմուղ՝ 2 նմուշ), Շիրակամուտ («Ղարահան» ջրմուղ՝ 3 նմուշ), Դեբեդ («Խառատի թալա» ջրմուղ՝ 1 նմուշ), Հարթագյուղ («Տաշոյի աղբյուր» ջրմուղ՝ 1 նմուշ), Ազնվաձոր («Շաղկասար» ջրմուղ՝ 1 նմուշ), Քարաբերդ («Հարությունի աղբյուր» ջրմուղ՝ 1 նմուշ), Արջուտ («Նոր կառուցված» ջրմուղ՝ 2 նմուշ), Արևաշող («Ոսկու հանք» ջրմուղ՝ 1 նմուշ), Լերմոնտովո («Կեչիներ» հանգստի գոտի «Տեղային» 1 նմուշ, «Պետրովա-Վալրչկա» ջրմուղ՝ 1 նմուշ, «Ղադրի ջուր»

ջրմուղ՝ 1 նմուշ): Si-գումարային ցուցանիշով շեղումներ են արձանագրվել՝ Շահումյան («Ծովասար»), Ալավերդի («Լոռի-Բերդ Ալավերդի»), Վանաձոր («Մաքրման կայան», «Նովոսելցովո»), Շիրակամուտ («Գոմձակ», «Ղարահան», «Մագոյի»), Կաթնաջուր («Չախկալի») համայնքներում:

Առկա 110 համակարգերից վարակազերծվում է 13-ը՝ 49 բնակավայրում: 69 համայնքի 93 ջրամատակարարման համակարգերի ջուրը չի վարակազերծվում, այդ թվում՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող Սպիտակ տարածաշրջանի 2 ջրմուղների՝ «Ղազանչի», «Գերմանական թաղամասի հորատանցքի» ջուրը, ինչպես նաև «Հովդարայի» և «Կաթնաղբյուրի» ջրմուղների ջրերը, «Գյուղամիջան» տեղային ոչ կենտրոնացված աղբյուրներից օգտվող 8 գյուղական համայնքների խմելու ջուրը: Խմելու ջրի վարակազերծման աշխատանքները կարելի է գնահատել անբավարար «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Սպիտակ» տեղամասի կողմից սպասարկվող «Չախկալի», «Շիրակամուտ-Սպիտակ» ջրամատակարարման համակարգերում: 2016թ. առաջին կիսամյակում խմելու ջրի մնացորդային ազատ քլոր ցուցանիշով կատարվել է 2859 նմուշի հետազոտություն, որից 56 նմուշում (1.96%) հայտնաբերվել է շեղում:

2016թ. առաջին կիսամյակի ընթացքում խմելու ջրի 11 նմուշ հետազոտվել է ճառագայթաբանական ցուցանիշներով, շեղումներ չեն արձանագրվել:

Լոռու մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարումը իրականացվում է գրաֆիկով՝ Վանաձոր քաղաքի «Մաքրման կայան» ջրմուղից սնվող թաղամասերը (Աղայան, Չուխաջյան փողոցներ, Երևանյան խճուղի, «Բազում» թաղամաս), Գուգարք, Շահումյան գյուղերը, «Սպիտակ քաղաքի «Չախկալի» ջրմուղից սնվող թաղամասերը (Շվեցարական, Ուզբեկական, Էստոնական, Կ-11, Նորվեգական, Իտալական, Վարպետանց և Տաշիր թաղամասեր), «Ջրաշեն-Սպիտակ» ջրմուղից սնվող թաղամասերը (Սովխոզային, Քր-Քրքորյան, Ս. Ավետիսյան, Առափնյա փողոցներ), «Գերմանական հորատանցք» ջրմուղից սնվող Գերմանական թաղամասը, «Շիրակամուտ-Սպիտակ» ջրմուղից սնվող թաղամասերը (Այգեստան թաղամաս, Ալեք Մանուկյան, Շահումյան, Ոփյան, Խնկոյան փողոցներ, Շիրակի խճուղի), Ջրաշեն և Լեռնավան գյուղերը, Ստեփանավանի «Գետավան» ջրմուղից

սնվող թաղամասերը, Ագարակ, Կողես, Յաղդան, Ուռուտ, Լոռի-Բերդ, Սվերդլով գյուղերը, Տաշիրի՝ «Հովդարա» ջրմուղից սնվող Մեծավան, Լեռնահովիտ, Կրուգլայա, Շիշկա, Սարչապետ գյուղերը, Ալավերդիում՝ «Լոռի Բերդ-Ալավերդի» ջրմուղից սնվող՝ Ջրավազանի փողոցը, Սանահին-Սարահարթ թաղամասը, Թումանյան, Քարինջ, Այրում, Մղարթ, Լորուտ, Աթան, Շամուտ, Ահնիձոր Դսեղ, Կաճաճկուտ համայնքները:

Ավելի հաճախ են արձանագրվել վթարներ՝ Վանաձորում, Սպիտակում, Գուգարք, Լեռնապատ, Կուրթան, Շահումյան, Գյուլաքարակ, Դարպաս, Վարդաբլուր գյուղերում:

Մարզում 2016թ. առաջին կիսամյակում ջրային գործոնով պայմանավորված վարակիչ հիվանդությունների բնկման դեպքեր չեն արձանագրվել: